ԱՎԱՐՏԱԿԱՆ
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը եվ կերպարվեստի մեթոդիկային ներկայացվող պահանջները

ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ «Թիվ 5 նուհ» ՀՈԱԿ

ԴԱՍՏԻԱՐԱԿ՝ Աստղիկ Աղավելյան

ՂԵԿԱՎԱՐ՝ Ավետիսյան Ժաննա

Կապան 2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……3

2. ՇԱՐԺՈՂԱԿԱՆ ՈԼՈՐՏ: ԽՈՇՈՐ ՇԱՐԺՈՂԱԿԱՆ ՈԼՈՐՏ: ՄԱՆՐ ՇԱՐԺՈՂԱԿԱՆ ՈԼՈՐՏ……5

3. ԻՆՔՆԱՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ: ԻՆՔՆԱՍՊԱՍԱՐԿՈՒՄ: ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ……7

4. ՀՈՒԶԱԿԱՆ, ԱՆՁՆԱՅԻՆ ՈՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ: ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ, ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ՀԵՏ: ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ, ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՍԱԿԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ: ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԱՐՔ: ԱՆՁՆԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ: ՀՈՒԶԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ……13

5. ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ՍՈՎՈՐԵԼՈՒ ՆԿԱՏՄԱՄԲ: ՀԵՏԱՔՐՔՐԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ: ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ: ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԵՏԵՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ: ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ……14

6.ԻՄԱՑԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ: ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ: ՏԱՐՐԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐ: ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ:ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ: ……20

7. ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ: ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ: ԼԵԶՈՒ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ: ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԳՐՔԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ: ՎԱՂ ԳՐԱՃԱՆԱՉՈՒԹՅՈՒՆ: ԽՈՍՔԻ ՀՆՉՅՈՒՆԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒՄ……25

8. ԿԵՐՊԱՐՎԵՍՏԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ……29

9. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……37

10. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԻՈՆ……38

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մինչև 6 տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչները ընդհանուր առմամբ նկարագրում են, թե ինչ պետք է իմանա և ինչ պետք է կարողանա անել երեխան որոշակի տարիքում: Դրանք զարգացման տարբեր ոլորտներում մինչև 6 տարեկան երեխաների վերաբերյալ մեր ունեցած ակնկալիքներն են՝ պայմանավորված տարիքային բնականոն զարգացման օրինաչափություններով և ազգային-մշա- կութային առանձնահատկություններով: Այս չափորոշիչները սահմանված են, որպեսզի ինչպես ընտանիքները, այնպես էլ երեխայի խնամքի և կրթական հաստատությունները արդյունավետորեն կազմակերպեն և իրականացնեն երեխայի դաստիարակությունը, զարգացումն ու կրթությունը սկսած ծննդից մինչև դպրոց գնալու տարիքը:

Վաղ մանկությունը երեխայի աճի, զարգացման և սովորելու բացառիկ ժամանակաշրջանն է: Կարևոր է նկատի ունենալ, որ որոշ երեխաներ կարող են չափորոշիչներով սահմանված ակնկալիքներից շատ ավելի բարձր ցուցանիշներ ունենալ, մինչդեռ որոշ երեխաներ էլ հնարավոր է, որ ամբողջապես չտիրապետեն այս փաստաթղթում նշված գիտելիքներին և հմտություններին: Այս իմաստովշատ կարևոր է, որ երեխաների տվյալտարիքին համապատասխան զարգացման և ուսումնառության հետ կապված ակնկալիքների մասին մտածելիս մենք ուշադրություն դարձնենք նաև նրանց անհատական առանձնահատկություններին: Երեխաները տարբեր են լինում՝ կախված իրենց բնածին հատկություններից, ունեցած փորձից, ունակություններից, առողջական վիճակից և սովորելու նկատմամբ ունեցած վերաբերմունքից, հետևաբար նրանց զարգացումը տարբեր տեմպերով է ընթանում: Պետք է ընդունել, որ երեխաների միջև այսպիսի տարբերությունները բնական են: Բոլոր երեխաների նկատմամբ անհրաժեշտ է դրսևորել հարգանք և նրանց վերաբերվել որպես ունակ անհատների, որոնք կարող են սովորել, հասկանալ իրենց շրջապատող աշխարհը, ընտրություն կատարել և արտահայտել իրենց սեփական կարծիքը:

Մինչև 6 տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչների

հիմքում ընկած է այն համոզմունքը, որ երեխաների ուսումնառությունը և զարգացումը բազմակողմանի է, քանի որ ֆիզիկական զարգացմանը զուգընթաց զարգանում է երեխայի խոսքը և լեզուն, զգացմունքները, սոցիալական շփման և իմացականկարողությունները: Հետևաբար ուսումնառության բոլոր ոլորտները կարևոր են առողջ զարգացման համար և պետք է հավասարապես արժևորվեն:

Մեծահասակներն ընդհանուր առմամբ մեծ դեր և ազդեցություն ունեն երեխաների աճի և զարգացման վրա, իսկ ծնողները միանշանակորեն իրենց երեխաների առաջին և ամենակարևոր դաստիարակներն են: Դաստիարակները և ընտանիքները պետք է տարբեր խաղերի միջոցով խթանեն երեխայի համակողմանի զարգացումը, գիտելիքներ հաղորդեն նրան շրջապատողաշխարհի մասին և աջակցեն, որ երեխայի մոտ զարգանան ամբողջ կյանքի ընթացքում սովորելու ցանկությունն ու հմտությունները: Մեծահասակները պետք է իմանան, որ երեխայի զարգացումը տեղի է ունենում հաջորդական փուլերով և կախված է նրա ունեցած փորձառությունից, ընտանեկան մշակույթից և անհատականությունից:

Չափորոշիչների սույն փաստաթուղթն ունի հետևյալ կառուցվածքը.

- *<u>ոլորտները</u>* ռաումնառության/զարգացման ուղղություններն են.
- *<u>ենթաոլորտները</u>* տվյալ ոլորտի բաղկացուցիչ մասերն են.
- *<u>չափորոշիչները</u>* սահմանում են տվյալ ենթաոլորտում երեխայից ակնկալվող վարքագիծը ընդհանուր առմամբ.
- *<u>ցուցիչները</u>*նշում են, թե երեխան ինչ գիտի և ինչ է անում, կամ ինչպիսի դիտարկելի վարքագիծ է դրսևորում.
- *<u>օրինակները</u>* պարզաբանում են յուրաքանչյուր ցուցիչի իմաստը:

Վաղ մանկության զարգացման և կրթական չափորոշիչները հասցեագրված են ծնողներին, ուսումնական հաստատություններին, ուսումնական ծրագրերի և տարբեր ձեռնարկների հեղինակներին, ուսումնախաղային նյութեր պատրաստող հաստատություններին: Չափորոշիչներն այն ուղենիշներն են, որոնք մեծահասակները կարող են օգտագործել տարբեր ոլորտներում երեխաների զարգացմանը նպաստելու համար:

1.ՇԱՐԺՈՂԱԿԱՆ ՈԼՈՐՏ

1.1 ԽՈՇՈՐ ՇԱՐԺՈՂԱԿԱՆ ՈԼՈՐՏ

5-6 տարեկան երեխաները շատ ակտիվ են, և թվում է, թե նրանք շարունակ շարժման մեջ են: Նրանց ֆիզիկական զարգացումը ձևավորվում է բոլոր ոլորտներում: Երեխաները մեծ մասամբ վերահսկում են իրենց շարժումները, թեև շարժվում են շատ արագ և ճարպկորեն: Այս տարիքում նրանք կարողանում են սահուն վազել, թռչկոտել մեկ ոտքի վրա, բարձրանալ և իջնել աստիճաններով՝ ոտքերը հաջորդաբար փոխելով, կոորդինացնել իրենց շարժումները տարբեր առաջադրանքներ կատարելիս և այլն: Երեխաների ֆիզիկական զարգացումը նպաստում է մտավոր զարգացմանը: Արագ շարժվող, ճկուն երեխան ավելի լավ է մտածում, աշխատում, խաղում ու ստեղծագործում: Այս տարիքային խմբի երեխաներն անընդհատ շարժման մեջ պիտի լինեն՝ տարիքային այս խմբի ֆիզիոլոգիական զարգացման առանձնահատկություններից ելնելով: Շատ կարևոր է ստեղծել միջավայր, որն անընդհատ ազատ և անկաշկանդ տեղաշարժվելու հնարավորություն է տալիս:

<u>Չափորոշչային պահանջներ</u>

1. Երեխան քայլում է կից քայլերով՝ առաջ և հետ, փակ աչքերով:

2. Սողում է առարկաների տակով:

3. Զույգ ոտքերով ցատկում է՝ հաղթահարելով **25-30**սմ բարձրության առարկաներ:

4. Մագլցում է ուղղահայաց մարմնամարզական պատով, ճոպանով:

5. Ձեռքով նետում է գնդակը, հետո՝ հարվածում:

6. Օղակով կատարում է տարբեր վարժություններ:

1.2. ՄԱՆՐ ՇԱՐԺՈՂԱԿԱՆ ՈԼՈՐՏ

5-6 տարեկան երեխաները կարողանում են օգտագործել իրենց ձեռքերի ու մատների մանր մկանները՝ բավականին բարդ առաջադրանքներ կատարելու նպատակով: Նրանց ձեռքերի ուժը և կառավարելիությունը գնալով ավելի է

զարգանում: Շարժումները դառնում են ավելի համաձայնեցված, տեղի է ունենում բարձր նյարդային համակարգի գործունեության զարգացում: Քանի որ որոշ երեխաներ ավելի հմուտ են, քան մյուսները, ավելի կարևոր է ուշադրություն դարձնել երեխայի աճին, քան այդ տարիքին բնորոշ կոնկրետ գործողությունների կատարման մակարդակին:

Չափորոշչային պահանջներ

1. Երեխան կառուցողական մանր առարկաներից կառուցում է շինություններ:

2. ճիշտ դիրքով բռնում է մատիտը, գրիչը, վրձինը, մկրատը:

3. Նկարում է մարդ մարմնի բոլոր մասերով և օրգաններով՝ գլուխ, աչքեր, քիթ, բերան, մարմին, վերջույթներ:

4. Ներկում կամ նրբագծում է պատկերը՝ դուրս չգալով սահմաններից:

5. Ծեփում է տարբեր մարմիններ, փոքր չափերի կոմպոզիցիաներ:

6. Կտրտում է ըստ ուրվագծի:

7. Ինքնուրույն կոճկում է կոճակները:

8. Իջեցնում է հագուստի շղթան:

9. Կապում է կոշիկների քուղերը:

10. Փակում և բաց է անում կոճգամները:

2. ԻՆՔՆԱՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

2.1ԻՆՔՆԱՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Երեխային շրջապատող բոլոր մեծահասակներն իրենց գործողություններով պիտի նպաստեն, որ երեխան ինքնուրույն անի ամեն ինչ, կարողանա կառավարել իր գործողությունները: Կազմակերպման այս ձևի հիմքում ընկած է երեխայի աշխատանքը՝ սկսած հագուստը հագնելուց մինչև խոհանոցային աշխատանք: Կարգ ու կանոնի նկատմամբ բնական, ներքին հակումը երեխային մղում է ինքն իրեն սպասարկելուն, սեփական հոգսերը ինքնուրույն հոգալու, որոշակի պարտականություններ կատարելու: Ինքնուրույնությունը երեխային ստիպում է գիտակցել, որ ինքն էլ մեծի նման մարդ է: Երբ շրջապատում բոլորը դա հասկանում են, ընդունում և հարգում են երեխային, դրանով օգնում են նրան անկախ և ինքնուրույն լինել, այսինքն՝ ազատ մարդ մեծանալ:

<u>Չափորոշչային պահանջներ</u>

1. Երեխան կապում է կոշիկների քուղերը:

2. Կարողանում է ինքնուրույն և ճիշտ օգտվել սպասքից, գործիքներից:

3. Ուտելիս ցուցաբերում է պատշաճ վարքագիծ (ծամելիս չի խոսում, օգտագործում է «բարի ախորժակ», «խնդրեմ», «ներողություն», «շնորհակալություն» բառերը, ուտում է անաղմուկ և այլն):

4. Հետևում է անձնական հիգիենայի կանոններին և պահպանում է դրանք:

5. Առաջարկում է հագուստի, սանրվածքի սեփական տարբերակ:

2.2. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Որպեսզի երեխաները դրսևորեն իրենց ողջ ներուժը, անհրաժեշտ է ստեղծել ապահով, անվտանգ և խրախուսող միջավայր: Երբ երեխան զարգանում է այդպիսի միջավայրում, նրա սովորելու հիմքը շատ ամուր է լինում և հետագայում երեխայի համար բավականին հեշտ է այդ հիմքի վրա կառուցել իր գիտելիքներն ու

հմտությունները: Անհատական և սոցիալական այն հմտությունները, որոնք այդ տարիքում երեխան ձեռք է բերում խաղի, հետազոտության, շփումների միջոցով, երեխային հնարավորություն են տալիս ոչ միայն ունենալ որոշակի հմտություններ, հետաքրքրություններ և ձգտումներ, այլ օգնում են նրան դառնալ տվյալ սոցիալական խմբի պատասխանատու, հարգված և լիիրավ անդամ: Երեխայի անվտանգության համար տարածքն այնպիսին պիտի լինի, որ նա կարողանա անկաշկանդ շարժվել, խաղալ, վազել, թռչկոտել: Միաժամանակ իր գործունեության ընթացքում նա սովորում է կոորդինացնել, ուղղորդել իր շարժումները, ճիշտ օգտվել գործիքներից ու սարքերից: Նրա գործողությունները դառնում են անվտանգ, և նա կարողանում է օգտվել շրջապատող իրերից՝ առանց իրեն վնասելու:

<u>Չափորոշչային պահանջներ</u>

1. Երեխան ցուցաբերում է մանրէների տարածումը սահմանափակող վարք (հազալիս և փռշտալիս ձեռքով ծածկում է բերանը, լվանում է ձեռքերը և այլն):

2. Խուսափում է խաղալ (չի խաղում) վտանգավոր իրերի հետ:

3. Գիտի երթևեկության զգուշացնող և արգելակող նշանները:

4. Գիտի, թե որ դեպքում պետք է զանգահարել հրշեջ ծառայության, շտապ օգնության, ոստիկանության հեռախոսահամարներով:

3. ՀՈՒԶԱԿԱՆ, ԱՆՁՆԱՅԻՆ ՈՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

3.1 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ, ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ՀԵՏ

Երեխաներն իրականում աշխարհի մասին իրենց գիտելիքները կառուցում են սոցիալական շփումների միջոցով, որից էլ մեծապես կախված է երեխաների հաջողությունը դպրոցում և հետագա կյանքում: Մեծահասակների կողքին ու մեծահասակների հետ ապրելով՝ երեխան անընդհատ նմանակում է նրանց: Դա երեխային չի պարտադրվում: Դրանով դրսևորվում է երեխայի մեծանալու ցանկությունը: Իր տիկնիկի և նրա արդուզարդի հետ խաղացող երեխան կրկնում է այն ամենը, ինչ տեսնում է կենցաղում: Բայց այս ամենը նրան պետք են շրջապատի հետ իր փոխհարաբերությունները ճշտելու, իր տեղը որոշելու համար, ինչպես նաև հասկանալու համար կապերի այն համակարգը, որի կենտրոնը ինքն է: Սոցիալական և հուզական զարգացումը հիմք է ծառայում շփումների և փոխհարաբերությունների համար, որոնք իմաստավորում են երեխաների ունեցած փորձառությունը տանը, դպրոցում և ավելի լայն շրջապատում: Ջերմ, ապահով, հետևողական, արագ արձագանքող, վստահելի հարաբերությունները երեխաների մեջ զարգացնում են համագործակցելու, բանակցելու, առաջնորդելու, ընկերություն անելու, իրենց զգացմունքները վերահսկելու հմտություններ: Այսպիսի հարաբերությունները օգնում են երեխաներին նաև պաշտպանվելու այն բացասական զգացմունքների ներգործությունից, որ կարող է առաջանալ աղքատության, բռնության, ընտանեկան պրոբլեմների և այլ պատճառներով: 5-6 տարեկանների սոցիալ-հուզական զարգացման նպատակով շատ արդյունավետ է կազմակերպել սոցիալականացմանը նպաստող զրույցներ և քննարկումներ

- գեղարվեստական ստեղծագործության հիման վրա,
- իրավիճակային զրույցներ:

Այս տիպի զրույց-քննարկումները ստեղծում են ժողովրդավարական, համագործակցային միջավայր, որտեղ ձևավորվում ու զարգանում են երեխայի լսելու, քննարկելու, լուծումներ գտնելու, հանդուրժողականություն դրսևորելու, ազատ հաղորդակցվելու, ընտրելու սոցիալական որակները: Դաստիարակն իր

վերաբերմունքով պետք է օրինակ լինի երեխաների համար: Երեխան գործնականում յուրացնում է դրական վարքագծային կանոնները (օրինակ՝ քաղաքավարական կանոնները), երբ երեխային շրջապատող մեծահասակները և հասակակիցները կենցաղում և առօրյայում անընդհատ օգտագործում են այդ կանոնները:

<u>Չափորոշչային պահանջներ</u>

1. Երեխան սկսում է խոսակցությունը, զրուցում է, հարցերով դիմում ծանոթ մեծահասակներին (հարևաններ, բժիշկ, խանութի վաճառող և այլն):

2. Պատմում է առօրյայում կապարված իրադարձությունների և տպավորությունների մասին:

3. Հարցնում է մեծահասակին հաստատված կանոնների կամ ռեժիմի/կարգի խախտման հետևանքների մասին:

4. Հարցով դիմում է մեծահասակին կամ պատեհ պահի նրա ուշադրությունը հրավիրում է ինչ-որ խնդրի վրա:

3.2ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ, ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՍԱԿԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ

5-6 տարեկան երեխաները սկսում են սովորել, թե ինչպես համագործակցաբար խաղան և աշխատեն մեկ այլ երեխայի կամ երեխաների հետ: Նրանք սկսում են լսել իրենց հասակակիցներին և հասկանալ նրանց զգացմունքները, համատեղ լուծել խնդիրներ, գնալ փոխզիջումների: Այս տարիքում երեխաներին հետաքրքրում է, թե ինչ է ընկերությունը, որն է ընկերության իմաստը (օրինակ՝ ի՞նչ է նշանակում ընկեր ունենալ, ինչպե՞ս պետք է ընկերություն անել և այլն): Երեխաներն արդեն ունենում են որոշակի նախընտրություն, թե ում հետ են ուզում խաղալ, և երբեմն խուսափում են շփվել այն հասակակիցների հետ, որոնց լավ չեն ճանաչում:

<u>Չափորոշչային պահանջներ</u>

1.Երեխան առաջարկում է իր օգնությունը հասակակցին, որը դրա կարիքն ունի:

2. Ընդունում է ուրիշների օգնությունը:

3. Տարբեր շրջապատներում ունի ընկերներ:

4. Իր խաղալիքը, գիրքը և այլն որոշ ժամանակով տալիս է ընկերներին կամ

փոխանակում է:

5. Խաղի մեջ փորձում է ընդգրկել բոլորին:

6. Խաղում է համագործակցելով՝ լսելով և առաջարկելով մտքեր:

7. Գտնում է տարբեր իրավիճակներում առաջացող խնդիրների լուծման ուղիներ:

8. Կարողանում է բանակցել՝ վեճեր լուծել, փոխզիջման գնալ մեծահասակի օգնությամբ:

3.3. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԱՐՔ

Սոցիալական վարքի տարրերի ներմուծումը կանոններով ուհրահանգներով չի կատարվում: Երեխայի կողքին ապրող մեծահասակների (ծնող, դաստիարակ, հարևան և այլն) սոցիալական վարքն է հանդիսանում այն օրինակը, որը բնական կյանքի ու հարաբերությունների ընթացքում շատ սահուն կերպով փոխանցվում է երեխաներին: Եթե մեծահասակը ապրում է վարքի որոշակի կանոններով, սակայն ցանկանում է, որ երեխան այլ վարքի կանոններ յուրացնի, դա երեխայի մոտ առաջ է բերում անբնականության զգացողություն և խառնաշփոթ, ուստի աննպատակ է և չի կարող տալ ցանկալի արդյունք: Ի լրումն մեծահասակների կողմից վարքի մոդելավորման, ուսումնական գործընթացը ևս պետք է նպաստի երեխայի դրական վարքի ձևավորմանը: 5-6 տարեկան երեխաները շատ հաճախ հայտնվում այնպիսի իրադրություններում, երբ նրանց անհրաժեշտ է մեծահասակների ուղղորդումը: Նրանք դեռևս կարող են դժվարանալ փոխզիջման գնալ, դրսևորել հանդուրժողականություն և լուծել խաղի ժամանակ ծագած հակասությունները: Մեծահասակի օգնությունը խնդիրների լուծման մի քանի տարբերակների առաջադրման ձևով կստիպի երեխաներին տվյալ խնդրին մոտենալ տարբեր տեսանկյուններից և փոխհամաձայնության գալ ընտրության հարցում:

<u>Չափորոշչային պահանջներ</u>

1. Երեխան հասկանում է, թե ինչպիսի արձագանք կարող է գտնել իր նուրիշների վարքը:

2. Հետևում է պարզ կանոններին:

3. Առօրյա աշխատանքներին մասնակցում է տարբեր դերերով:

4. Գործածում է բարեկիրթ բառեր և դրսևորում է բարեկիրթ վարքագիծ:

5. Կարողանում է միանալ անծանոթ երեխաների խաղին:

6. Առօրյա աշխատանքներին մասնակցում է ինչպես ունկնդրի, այնպես էլակտիվ մասնակցի դերում:

3.4. ԱՆՁՆԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Սեփական անձի գիտակցումը և սեփական անձի դրական ընկալումը ձևավորվում է ուրիշների հետ շփումների և դրական փորձառության արդյունքում: Երեխան իր ապրած 5-6 տարիների ընթացքում արդեն ունի ձևավորված սեփական վերաբերմունք իր անձի նկատմամբ: 5-6 տարեկան ինքնավստահ երեխան նոր առաջադրանքներին և իրավիճակներին վերաբերվում է խանդավառությամբ, դրսևորում իր զգացմունքները համապատասխան ձևով, իր մասին տեղեկություններ կիսում ուրիշների հետ: Շատ կարևոր է երեխաների համար ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ նրանք կարող են զարգացնել սեփական անձի և այլոց նկատմամբ հարգանք, կարող են առանց վախենալու արտահայտել սեփական կարծիքը և պատրաստ են լսել մյուսների կարծիքը, որը տարբերվում է իրենց կարծիքից: Այս տարիքում երեխաների մեջ արդեն սկսում է ձևավորվել իրավունքների և պարտականությունների հասկացողությունը:

<u>Չափորոշչային պահանջներ</u>

1. Երեխան գիտի իր անձին վերաբերող անհրաժեշտ տեղեկություններ, անունը, ազգանունը, տարիքը, ծնողների անունները, ազգանունները, աշխատանքի վայրը:

2. Դրսևորում է իր համար անբարենպաստ իրավիճակում զգացմունքները կառավարելու պարզագույն հմտություններ:

3. Ենթարկվում է օրվա ռեժիմին:

4. Հոգ է տանում իրեն և խմբին պատկանող իրերի մասին:

5. Ճանաչում և հպարտանում է սեփական ձեռքբերումներով:

3.5 ՀՈՒԶԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Երեխայի այս կամ այն հուզական վիճակը դրսևորվում է անհատական, շարժումների միջոցով, որը կոչվում է արտահայտչական մոտորիկա: Արտահայտչական մոտորիկան ընդգրկում է դիմախաղը, մնջախաղը (կեցվածք, դիրք, ձեռքերի շարժում և այլն), վոկալ դիմախաղը (ձայնային, տեմբր, հնչերանգ, խոսքի արագություն, արտասանություն և այլն): Արտահայտչական մոտորիկան արտացոլում է երեխայի հուզական վիճակը, որը կարող է նրան բնորոշ լինել ընդհանրապես, կամ լինել կոնկրետ իրավիճակի արդյունք: Երեխայի հուզական ոլորտի արտաքին դրսևորումների մեծ մասը, որոնք մենք կարող ենք դիտարկել երեխայի անմիջական շարժումներում, բնութագրում է երեխայի հուզական ֆոնը: Երեխայի մեծանալուն և նրա գործունեության ձևերի զարգացմանը զուգընթաց, տեղի է ունենում հույզերի ներկապնակի ընդլայնում և խորացում: Հույզերը կարող են լինել՝ մտավոր (հետաքրքրասիրություն), սոցիալական (սեր, ատելություն), գեղագիտական (գեղեցիկի, հումորի զգացում), բարոյական (պարտքի, մեղքի զգացում):

<u>Չափորոշչային պահանջներ</u>

1. Երեխան ճանաչում է հիմնական հույզերը և զգացմունքները:

2. Կարողանում է սեփական հույզերն արտահայտել բառային և ոչ բառային հաղորդակցության ձևերով:

3. Դրսևորում է ապրումակցում ուրիշների հույզերին:

4. Մարդկանց դեմքի արտահայտություններից կարողանում է ճանաչել հիմնական հույզերը:

4. ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ՍՈՎՈՐԵԼՈՒ ՆԿԱՏՄԱՄԲ

4.1ՀԵՏԱՔՐՔՐԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Երեխաներն ունեն բնատուր հետաքրքրասիրություն և հարցասիրություն: 5-6 տարեկան երեխաներն ակտիվ սովորողներ են, որոնց հետաքրքրում է ուսումնական միջավայրը և այն բազմազան նյութերը, որ գտնվում են իրենց խմբասենյակում: Նրանք հաճույքով և ոգևորությամբ են օտագործում դերախաղի, արվեստի, երաժշտության կենտրոններում եղած նյութերը՝ իրական կյանքից դրվագներ կամ տեսարաններ ներկայացնելու համար: Նրանք սիրում են փորձարկել նոր տեխնիկական միջոցներ, գործիքներ, նյութեր՝ կատարելու համար այն աշխատանքը, որը գրավում է իրենց և առաջացնում արդյունքի հասնելու մեծ ցանկություն: Նախադպրոցական ծառայությունն՝ ընտանիքի հետ համագործակցելով, պետք է խթանի երեխաների հարցասիրությունը, օգնի նրանց հետազոտելու, նախաձեռնելու և խնդիրներ լուծելու: Մանկավարժները և ծնողները պետք է ընդլայնեն երեխայի հետաքրքրության շրջանակները, խրախուսեն հարցադրումներն ու կշռադատումները: Այդպիսի միջավայրում՝ ընտանիքների հետ նման իմաստալից հարաբերությունների առկայությամբ, երեխաների մեջ զարգանում են սովորելու նկատմամբ այնպիսի վերաբերմունք և հմտություններ, որոնք անհրաժեշտ են հետագայում դպրոցում հաջողության հասնելու և ողջ կյանքում սովորելու համար:

<u>Չափորոշչային պահանջներ</u>

1. Երեխան հարցեր է տալիս իրեն հետաքրքրող թեմաների մասին:

2. Հետաքրքրվում է նոր տեղեկատվությամբ և պատրաստակամ է ձեռք բերելու նոր փորձառություն:

3. Հետաքրքրություն է ցուցաբերում դպրոցի և դպրոցական պարագաների նկատմամբ:

4.2 ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

Նախաձեռնությունը արտահայտում է երեխաների ցանկությունը՝ նպատակաուղղված առաջադրանքներ ստանձնելուն, ուսումնառական գործունեությամբ զբաղվելուն, նոր տեղեկատվություն ձեռք բերելու համար ջանքեր գործադրելուն: 5-6 տարեկան երեխաները հաճախ դժվարությամբ են նախաձեռնություն ցուցաբերում և ընտրություն կատարում: Նրանք սովորաբար նախընտրում են անել այն, ինչը իրենց մոտ լավ է ստացվում, և դժվարությամբ են նախաձեռնում բաներ, որոնք իրենց շատ ծանոթ չեն: Երեխաների նախաձեռնությունը խթանելու համար պետք է ստեղծել լավ ձևավորված, նպատակային միջավայր, որտեղ դաստիարակը նպաստում է երեխաների խաղին, օգնում, որպեսզի երեխաների նոր գիտելիքները կառուցվեն նրանց ուժեղ կողմերի, հետաքրքրությունների և նախնական փորձի վրա: Երեխայի նախաձեռնությունը խրախուսելու համար դաստիարակը պետք է ստեղծի միջավայր, որտեղ երեխան չի վախենում սխալվել: Նա պետք է հասկանան, որ սխալվելը սովորելու և հմտություններ ձեռք բերելու գործընթացի անբաժանելի մասն է: Պետք է կազմակերպել այնպիսի աշխատանքներ, որոնք չունեն միանաշանակ ՛ճիշտ՛ կամ ՛սխալ՛ լուծումներ: Անհրաժեշտ է ուղղորդել երեխայի ուսումնառությունը՝ նրան հնարավորություն տալով կատարել ընտրություն, ցուցաբերել նախաձեռնություն և ակտիվություն իր ուսումնական գործընթացում:

<u>Չափորոշչային պահանջներ</u>

1. Երեխան որոշում է աշխատել իրեն հետաքրքրող առաջադրանքի վրա:

2. Ընտրություն է կատարում խաղի/առաջադրանքների միջև:

3. Խաղեր է նախաձեռնում մյուս երեխաների հետ:

4. Խաղերի, առաջադրանքների ժամանակ նոր մտքեր և տարբերակներ է առաջարկում:

4.3 ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԵՏԵՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մասնակցությունն ու հետևողականությունը արտահայտում են երեխայի

կարողությունը որևէ գործի մասնակցելու և սկսած գործում համառություն ցուցաբերելու՝ այն ավարտելու համար նույնիսկ այն դեպքում, երբ հանդիպում է դժվարությունների և ստիպված է փնտրել նպատակին հասնելու տարբեր եղանակներ: Երեխաների մասնակցությունն ու հետևողականությունը զարգացնելու համար դաստիարակը պետք է այնպիսի հնարավորություններ ստեղծի, որոնք կօգնեն երեխաներին նպատակ սահմանելու և ձգտելու հասնել դրան: Երեխաներին կարելի է առաջարկել երկար ժամանակ պահանջող աշխատանքներ, ինչպես օրինակ՝ սերմեր ցանել և խնամել, որպեսզի ծլեն: Դաստիարակները և ծնողները պետք է բավարար ժամանակ հատկացնեն և աջակցություն ցուցաբերեն երեխային՝ աստիճանաբար բարդացող խաղեր կամ առաջադրանքներ կատարելու համար:

<u>Չափորոշչային պահանջներ</u>

1. Երեխան լուծում է խնդիրը՝ փորձելով և սխալվելով, ինչպես նաև դիմելով տարբեր միջոցների:

2. Գործում է ըստ իր սահմանած պլանի:

3. Ավարտին է հասցնում սկսած խաղը կամ առաջադրանքը:

4. Իր օգնությունն է առաջարկում մյուսներին:

4.4 ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

5-6 տարեկան երեխաները կարող են բավական երկար ժամանակ (20-30 րոպե) հատկացնել այն առաջադրանքների կատարմանը, որոնք իրենք են ընտրել: Սակայն նրանց համար ավելի դժվար է կենտրոնանալ այն առաջադրանքների վրա, որոնք իրենք չեն ընտրել կամ էլ պահանջում են հմտություններ, որոնց իրենք չեն տիրապետում: Դժվար առաջադրանքներ կատարելիս երեխաները հաճախ կարիք ունեն քաջալերման, որպեսզի կարողանան շարունակել աշխատանքը: Նրանք սկսում են հասկանալ, որ սխալվելը թույլատրելի է, և նոր բան սովորելիս և նոր հմտություններ ձեռք բերելիս միշտ էլ սխալներ լինում են:

<u>Չափորոշչային պահանջներ</u>

1. Երեխան կարողանում է ըստ տրված օրինակի կատարել առաջադրանքը՝ պահպանելով օրինաչափությունը:

2. Կարողանում է ուշադրությունը կենտրոնացած պահել որոշակի գործունեության

ընթացքում (օրինակ՝ լսում է պատմվածքը և հետո հարցեր է տալիս):

3. Եթե խաղից/առաջադրանքից շեղում են, կարողանում է կրկին վերադառնալ դրան:

4.5 ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Ուշադրության կենտրոնացումը նպաստում է նաև հիշողության զարգացմանը: Երբ երեխան ուշադրությամբ աշխատում է որևէ բանի վրա, իսկ այնուհետև զրուցում իր կատարածի շուրջ մանկավարժի կամ ընկերների հետ, նա կարողանում է մտաբերել և հստակորեն վերարտադրել այն, ինչ արել է, լսել, սովորել: Մանկավարժը տարբեր հարցերի միջոցով կարող է օգնել երեխային զարգացնելու հիշողությունը: Շատ օգտակար են քննարկումներն ընտանիքում, մանկապարտեզում՝ կապված տարբեր էքսկուրսիաների, օրվա ընթացքում երեխայի կատարած աշխատանքների հետ: Պետք է երեխայի համար ստեղծել բնական զրույցի մթնոլորտ, որտեղ նա կարող է ներկայացնել անցուդարձը մանկապարտեզում, կիսել ընկերների հետ իր տպավորությունները որևէ իրադարձության, մուլտֆիլմի և իրեն հետաքրքրող այլ բաների մասին:

<u>Չափորոշչային պահանջներ</u>

1. Երեխան կարողանում է ճանաչել նախկինում տեսած առարկաները:

2. Կարողանում է հիշել և վերարտադրել որոշակի գործողություններ:

3. Կարողանում է (մինչև **5** անգամ կրկնելու դեպքում) հիշել և վերարտադրել իմաստով միմյանց հետ չկապված պարզ բառեր:

4. Հիշողությամբ նկարագրում կամ ներկայացնում է իրավիճակներ և գործողություններ:

4.6 ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԼՈՒԾՈՒՄ

Իրական կյանքում պրոբլեմներ լուծելիս, երեխաները կապեր են ստեղծում այն բոլոր գիտելիքների միջև, որոնք ստանում են ուսումնական հաստատությունում, տանը տարբեր գործունեությունների միջոցով: Պրոբլեմները հիմնավորելու և լուծելու համար երեխան կատարում է հարցադրումներ, փորձում է տարբեր ռազմավարություններ, բացատրում է իր մտածածը՝ նշելով պատճառները և հիմնավորելով իր որոշումը: 5-6 տարեկան երեխաները լուծում են խնդիրները և

բացատրում իրենց տեսակետը՝ որոշակի առարկաների հետ աշխատելով, պատկերներ նկարելով կամ լուծումները ներկայացնելով:

<u>Չափորոշչային պահանջներ</u>

1. Երեխան փորձելու և սխալվելու միջոցով լուծում է խնդիրը:

2. Առաջարկում է խնդրի, հարցի լուծման մեկից ավելի տարբերակներ:

3. Բացատրում է, թե ինչպես է կայացրել պարզ որոշումներ:

4. Իր բառերով կարողանում է պատմել, թե ինչպես է հասկացել տվյալ իրավիճակը:

4.7ԴԻՏԱՐԿՈՒՄ, ՀԵՏԱԶՈՏՈՒՄ

Աշխարհի վերաբերյալ բնական հետաքրքրասիրության պատճառով 5-6 տարեկան երեխաների մոտ հաճախ առաջանում է՝ «ինչո՞ւ» հարցը: Հարցերը ծագելու պահից երեխաները սկսում են պատասխաններ փնտրել հիմնականում հետազոտությունների, պրպտումների, մանրակրկիտ դիտարկումների միջոցով՝ օգտագործելով իրենց զգայարանները: Երեխաները դիտարկումների հետ կապված հարցեր են տալիս, առաջարկում են բացատրություններ ներկայիս և ապագա իրադարձությունների, դեպքերի, երևույթների վերաբերյալ: Նրանք սկսում են գուշակել դրանց պատճառները, որոնք կարող են «գիտականորեն ճիշտ» չլինել: Դիտարկումներից հետո երեխաները մեծահասակների օգնության և ուղղորդման կարիքն ունեն, որպեսզի իմի բերեն ձեռք բերած տեղեկությունը, կանոնակարգեն դիտարկումները մտքերի ձևով, որոնք էլ կօգնեն նրանց հետագա հայտնագործություններ կատարելու: Երեխաները մեծ հաճույք են ստանում, երբ դասակարգում են առարկաները, համեմատություններ անում, բնության մեջ օրինաչափություններ գտնում, նմանություններ և տարբերություններ նկատում: Զգայարանների միջոցով կատարված հետազոտությունները երեխաներին օգնում են հասկանալու առարկաների հատկությունները մանրամասնությամբ: Դաստիարակի օգնությամբ երեխաները նկատում են, թե ինչից են պատրաստված առարկաները, և կարողանում են նկարագրել առարկաների տարբեր հատկանիշները՝ չափը, ձևը, գույնը, նյութը, քաշը, ջերմաստիճանը, մագնիսային ձգողականությունը, սուզվելը կամ լողալը և այլն: Թեև 5-6 տարեկան երեխաները կարող են հիացած նայել, թե

ինչպես է հալվում ձյունը կամ սառցակալում ջուրը, այդուհանդերձ նրանք ընդամենը տարրական գիտելիքներ ունեն նյութի պինդ վիճակից հեղուկ և գազային վիճակի անցման պատճառների վերաբերյալ:

Չափորոշչային պահանջներ

1. Երեխան նկարագրում է առարկաների հատկությունները:

2. Նկատում է շրջապատում տեղի ունեցող փոփոխությունները և դրանց պատճառահետևանքային կապերը, հաջորդականությունը:

3. Ուսումնասիրությունների ընթացքում հարցեր է տալիս՝ իրեն հետաքրքրող խնդիրը պարզելու համար:

4. Տեղեկություններ է հավաքում բնության երևույթների վերաբերյալ:

5. Տալիս է բացատրություններ բնության երևույթների վերաբերյալ:

6. Դիտարկում և նկարագրում է կենդանի էակների, բույսերի, առարկաների հատկանիշները:

7. Բացատրում է կենդանիների, բույսերի և միջավայրի միջև եղած պարզ փոխհարաբերությունները:

8. Հոգ է տանում տնային կենդանիների և բույսերի մասին:

9. Համեմատում և հակադրում է առարկաներն ու երևույթները:

10. Կանխատեսումներ է անում, թե ինչ կարող է կատարվել:

11. Օգտագործում է իր **5** զգայարանները և տարբեր գործիքներ՝ դիտարկելու, տեղեկություններ հավաքելու և կանխատեսումներ կատարելու նպատակով:

12. Կատարում է պարզ փորձեր և դրանց արդյունքների վերաբերյալ եզրակացություններ անում:

5. ԻՄԱՑԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

5.1 ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Երեխան աշխարհը ճանաչում է հինգ զգայարանների միջոցով: Դրանք են՝ համը, տեսողությունը, լսողությունը, հոտառությունը, շոշափելիքը: Երեխայի գործունեության ընթացքում հինգ զգայարաններն օգտագործելը և զարգացնելը, շրջապատող միջավայրում եղած նյութերն ու երևույթները ճանաչելը, դրանց մասին պատմելը նպաստում են երեխայի տրամաբանության և մտածողության զարգացմանը, կենսափորձի հարստացմանը, աշխարհընկալման ձևավորմանը: Օգտագործելով իր հինգ զգայարանները՝ երեխան ճանաչում է ծանոթ առարկաների, նյութերի, բույսերի, կենդանիների, առարկաների հոտերը, ձայները և այլ առանձնահատկությունները: Երեխան ճիշտ վերաբերմունք է մշակում շրջակա միջավայրի նկատմամբ, կարողանում է ռաումնասիրության, հետազոտության, փորձի միջոցով իրեն անհրաժեշտ տեղեկություններ ձեռք բերել: Երեխայի գործունեությունը պետք է այնպես կազմակերպել, որ նա կարողանա՝

- ճիշտ կողմնորոշվել միջավայրում,
- կառավարել և նպատակաուղղել իր գործողությունները,
- ճանաչել շրջապատի իրերը, առարկաները, նյութերը,
- օգտվել անհրաժեշտ նյութերից, գործիքներից և սարքերից,
- գործունեության ընթացքում զգուշություն ցուցաբերել օգտագործվող նյութերի և առարկաների նկատմամբ:

<u>Չափորոշչային պահանջներ</u>

1. Երեխան համեմատություններ է անում, գտնում է նմանություններն ու տարբերությունները, մասերի է բաժանում, խմբավորում է առարկաներն ըստ հատկանիշի:

2. Դիտարկում է (նաև խոշորացույցով, հեռադիտակով և այլն) առարկաները, բնության երևույթները և կարողանում է ներկայացնել դիտարկվածն ու բացատրել իրողության պատճառները:

3. Գտնում է օրինաչափություններ, պատճառահետևանքային կապեր, բացատրում է բարդ իրողությունների պատճառներ:

4. Կարողանում է նպատակային օգտագործել տարբեր գործիքներ ու սարքեր (աշխատել գյուղատնտեսական, մեխանիկական, կենցաղային գործիքներով):

5. Կատարում է քննադատական վերլուծություններ (օրինակ վերլուծում է գրքերի կերպարների վարքը և առաջարկում, թե ինքը ինչպես կվարվեր: Նկարների մեջ հասկանում է հակասությունը):

6. Տրամաբանական պարզ եզրահանգումներ է անում (այնքան-որքան, այնպես-ինչպես, եթե-ապա):

5.2 ՏԱՐՐԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐ

Երեխաները մաթեմատիկան սովորում են բնական ճանապարհով և ինքնաբուխ կերպով, երբ շփվում են իրենց շրջապատող աշխարհի հետ, հետազոտում են և փորձում հասկանալ այն: Ուստի մաթեմատիկան պետք է ինտեգրված լինի երեխաների առօրյա գործունեության բոլոր ոլորտներում: Մաթեմատիկան կարելի է ուսուցանել անհատական և խմբային աշխատանքների, պլանավորված փորձառական պարապմունքների միջոցով, որոնց ընթացքում երեխաները շփվում են միմյանց հետ, խնդիրներ լուծում և կշռադատում: Մաթեմատիկան սերտորեն կապված էզարգացման բոլոր ոլորտների հետ, ուստի մաթեմատիկա ուսուցանելիս շատ կարևոր է միջառարկայան կապերի ստեղծումը:

<u>Չափորոշչային պահանջներ</u>

1. Հաշվում է մինչև **20**-ը:

2. Հաշվում է **10**-ից հակառակ հաջորդականությամբ:

3. Մինչև **1**0-ի սահմաններում կարողանում է հաշվել զույգ և կենտ թվերը:

4. **10** թվի սահմաններում գիտի թվի քանակական կազմը:

5. Երեխան հաշվում է, ավելացնում, պակասեցնում, մեծերի հետ խանութում առևտուր է անում, չափումներ կատարում:

6. Երեխան ունի պատկերացում երկրաչափական պատկերների մասին:

7. Տարբերակում է առարկաների ձևերը:

8. Թվարկում է իրենից ձախ կամ աջ, հեռու կամ մոտիկ, վերևում կամներքևում գտնվող առարկաները:

9. Տարբերակում է անցյալում, ներկայում, ապագայում կատարվող գործողությունները:

10. Դրսևորում է ժամանակի հետ կապված հասկացությունների իմացություն:

11. Գաղափար ունի ժամի, ժամացույցի, օրացույցի մասին:

12. Տիրապետում է համրանքի տարրական գիտելիքների ու հմտությունների:

13. Մաթեմատիկական գիտելիքները կիրառում է խաղում:

14. Պատասխանում է՛ո՞ր՝, ՛որերո՞ր՝, ՛որքա՞ն՝ հարցերին:

15. Հասկանում է երկար-կարճ, հաստ-բարակ, բարձր-ցածր, այնքան-որքան հասկացությունները:

5.3 ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ

5-6 տարեկան երեխաները կարող են ստեղծագործաբար մոտենալ իրենց առաջադրանքներին և փորձել մի քանի եղանակներով լուծել իրենց առջև դրված խնդիրները: Երեխաների ստեղծագործական մտածողությունը կարելի է խթանել՝ ապահովելով այնպիսի ուսումնական միջավայր, որտեղ նրանք կարող են փորձել, սխալվել, շտկել: Որոշ երեխաներ չեն ցանկանում փորձել նոր եղանակներ, որովհետև վախենում են անհաջողության մատնվել: Եթե երեխաները մի քանի անգամ անհաջող փորձեր են անում լուծելու որևէ խնդիր, նրանց համար շատ կարևոր է իմանալ, թե երբ և որտեղ կարող են օգնություն ստանալ, որպեսզիչհուսահատվեն և չհիասթափվեն տվյալ աշխատանքից:

<u>Չափորոշչային պահանջներ</u>

1. Երեխան կարողանում է տրված նյութի տարբեր կիրառություններ գտնել (առնվազն **3):**

2. Կարողանում է հորինել կիսատ թողած պատմությունը:

3. Պատմությունները ներկայացնում է շարժումների, դերախաղի, կերպարվեստի, երաժշտության և այլ միջոցներով:

4. Մնջախաղի միջոցով ներկայացնում է պարզ օբյեկտներ և գործողություններ:

5. Կարողանում է երևույթները և առարկաները ներկայացնել պայմանական նշանների միջոցով:

6. Կարողանում է կիսատ նկարած պատկերները ճանաչել և ասել դրանց անունները:

5.4 ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ

5-6 տարեկան երեխաները սկսում են ճանաչել սեփական անձը, իրենց դերը ընտանիքում, և նրանց ճանաչողությունը աստիճանաբար ընդլայնվում է դեպի ավելի լայն սոցիալական համակարգեր՝ դպրոց, թաղամաս, քաղաք...և աշխարհ: Իրենց կյանքի ընթացքում երեխաները շփվում են տարբեր մարդկանց հետ, և շատ կարևոր է, որ նրանք կարողանան կողմնորոշվել, թե ինչպիսին պետք է լինի իրենց համակեցությունը այդ մարդկանց հետ: Ազատ գործունեությունը հնարավորություն կտա երեխային զարգացնելու ինքնուրույնություն և կյանքի տարբեր իրադրություններում գործելու կարողություն: Միջավայրը պետք է ամրապնդի այն հասկացություններն ու հմտությունները, որոնք կօգնեն երեխային դառնալու լավ քաղաքացի և ակտիվորեն մասնակցելու բազմամշակույթ, ժողովրդավարական հասարակության կյանքին: Դաստիարակը պետք է կազմակերպի աշխատանքներ, որոնք երեխայի մոտ կձևավորեն պատկերացումներ աշխատանքի բովանդակության և նշանակության մասին, գաղափար կտան մեծերի աշխատանքի մասին՝ տարրական գիտելիքներ հաղորդելով շինարարության, գյուղատնտեսության, արտադրության ճյուղերի, առանձին մասնագիտությունների, տրանսպորտի, տեխնիկայի, բնակչության սպասարկման ծառայությունների՝ փոստի, գրադարանի, թանգարանի, հիվանդանոցի, դպրոցի, սրճարանի, խանութի և այլնի վերաբերյալ:

<u>Չափորոշչային պահանջներ</u>

1. Երեխան տեղեկացված է իր բնակավայրի մասին, գիտի տան հասցեն:

2. Տարբերակում է հարազատական կապերը և հարաբերությունները:

3. Գիտի, թե ինչով են զբաղվում որոշ մասնագիտությունների տեր մարդիկ:

4. Կարողանում է ազատ կողմնորոշվել տարածքում:

5. Գիտի ճանապարհային երթևեկության տարրական կանոնները:

6. Տարբերում է տրանսպորտի որոշ տեսակներ:

7. Ճանաչում է բնության երևույթները՝ ամպրոպ, անձրև և այլն:

8. Տարբերակում է վայրի և ընտանի կենդանիներին:

9. Գիտի բույսերի ու կենդանիների աճի և զարգացման փուլերը:

10. Գիտի կենդանիների ու բույսերի բնակության միջավայրի բազմաձևությունը, ջրային, վերերկրյա-օդային, հողային:

11. Ունի որոշ գիտելիքներ շրջակա միջավայրի բույսերի ու կենդանիների պաշտպանության և նրանց հետ վարվելու կանոնների մասին:

12. Ունի որոշ գիտելիքներ Հայաստանի Հանրապետության, մայրաքաղաք Երևանի, օրհներգի, դրոշի, զինանշանի, տեսարժան վայրերի, հուշարձանների, ազգային ծեսերի ու տոների մասին:

13. Ճանաչում է որոշ երաժշտական գործիքներ:

14. Երգում է մանկական երգեր և կատարում է պարային շարժումներ:

15. Կարող է պատմել որոշ պարզ, ոչ ծավալուն ազգային հեքիաթներ, պատվածքներ և այլն:

6. ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

6.1 ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Բանավոր խոսքի զարգացումը օգնում է երեխաներին արտահայտելու և մեկնաբանելու իրենց մտքերը, զգացմունքները, գաղափարները, ինչպես նաև արձագանքելու ուրիշների գաղափարներին և գործողություններին: Իրենց գործունեության ընթացքում երեխաները սկսում են խոսքն օգտագործել տարբեր սոցիալական իրավիճակներում: Բանավոր խոսքի զարգացման համար անհրաժեշտ է լեզվի իրական ու բնական գործածում, երեխային իր խոսքի նկատմամբ վստահության ներշնչում, անկաշկանդ խոսելու, արտահայտվելու հնարավորություն, շփման և հաղորդակցման համար ազատ ու բնական պայմանների ապահովում: Բանավոր խոսքին տիրապետում են խոսելու միջոցով: Անհրաժեշտ է խոսքային ինքնարտահայտման պահանջմունք ձևավորել, որպեսզի երեխան ցանկանա խոսել, պատմել, հաղորդակից դարձնել իր մտքերին, կիսել իր խոհերն ու հույզերը: Դա կարելի է հնարավոր դարձնել միայն համապատասխան բարենպաստ միջավայր, բարյացակամ վերաբերմունք և ուշադրությամբ ու հետաքրքրությամբ ունկնդրելու մթնոլորտ ստեղծելու դեպքում:

<u>Չափորոշչային պահանջներ</u>

1. Երեխան հասկանում է և առանց լրացուցիչ հիշեցման հետևում է մի քանի քայլից բաղկացած հրահանգներին:

2. Լսում և մասնակցում է խոսակցություններին:

3. Հասկանում է ժամանակային հասկացությունները՝ առավոտ, կեսօր, երեկո:

4. Վերապատմում է լսած պատմվածքը, հեքիաթը, նկարը, բանաստեղծությունը:

5. Կատարում է տրամաբանական կանխատեսումներ:

6. Նայելով նկարին՝ տրված բառերով կազմում է նախադասություններ:

7. Գտնում է երևույթների ու կերպարների նմանություններն ու ու տարբերությունները:

8. Փորձում է կռահել անծանոթ բառի իմաստը:

9. Բառերով արտահայտում է հարաբերությունները, զգացմունքները, հույզերը:

6.2 ԼԵԶՈՒ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հաղորդակցությունը սերտորեն կապված է մի շարք հմտությունների հետ, ինչպիսիք են լսելը, հասկանալը, բանավոր զրույցներին հետևելը և այլն: Հաղորդակցական հմտությունների զարգացման համար անհրաժեշտ է հասկանալ.
ա) այն սոցիալական համատեքստը, որտեղ տեղի է ունենում հաղորդակցություն բ) հաղորդակցության նպատակները, գ) հաղորդակցության մեջ առկա զգացմունքների տարրերը: Բանավոր խոսքի, հաղորդակցման լավագույն միջոցը զրույցն է: Զրույցը կազմակերպվում է այնպես, որ ավելի շատ խոսեն, պատմեն, արտահայտվեն երեխաները: Զրույցի թեմա կարող են դառնալ երեխայի անձը և այն ամենը, ինչն անմիջապես կապվում է նրա «ես»-ի հետ: Օրինակ, նա կարող է պատմել իր ընտանիքի, ընկերների, խաղալիքների, բակի, իրեն շրջապատող բնության կենդանիների, բույսերի, երևույթների մասին: Երեխաների հետ կարելի է զրուցել սիրված մուլտֆիլմերի, կինոնկարների, խաղերի և այն ամենի մասին, ինչը ոգևորում, ակտիվ հաղորդակցման է մղում նրան: Բնության մեջ հաճախակի գտնվելը ավելի մեծ հնարավորություններ է ստեղծում դիտարկումների, մտքերի փոխանակման և զրույցների համար:

<u>Չափորոշչային պահանջներ</u>

1. Երեխան տեղեկություն ստանալու համար տալիս է ե՞րբ, ինչպե՞ս, ի հարցերը և փորձում է գտնել պատասխաններ:

2. Նախաձեռնում է խոսակցություն հասակակիցների ու մեծահասակների հետ

3. Արտահայտում է իր ունեցած ինֆորմացիան և կապ է ստեղծում նոր լսածի ու սովորածի միջև:

4. Մեկ նախադասության մեջ մեկտեղում է մի քանի միտք:

5. Հարցեր է տալիս՝ անծանոթ բառերի իմաստը հասկանալու համար:

6.3. ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԳՐՔԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

5-6 տարեկանները հիմնականում հասկանում են, որ բառերն արտահայտում են ինչ-որ բաներ՝ առարկաներ, գաղափարներ, դեպքեր, իրադարձություններ, և կազմվում են տառերից: Երեխաները հաճույքով են պատմում և «գրում»պատմվածքներ: Մինչև գրելու պայմանական ձևերի օգտագործումը, երեխաները կամովին բացատրում են իրենց նկարած նկարները: Նկարներն օգտագործում են պատմվածքներ պատմելու համար, պատմվածքներն էլ ներկայացնում են նկարների և խաղի միջոցով: Գիր չիմացող երեխաների համար, որպես գրավոր խոսք՝ այս փողում անփոխարինելի են նկարազարդ գրքերը, որոնց օգնությամբ նա կարողանում է պատմել պատմությունը, կարողանում է կանխագուշակել, ստեղծագործել: Այս տարիքային խմբի համար գրավոր հաղորդակցման միակ միջոցը նկարչությունն է:

<u>Չափորոշչային պահանջներ</u>

1. Երեխան լսում է ընթերցվող տարբեր պատմություններ ու հեքիաթներ:

2. Պատմում է պատմություններ, որոնք ունեն սկիզբ, զարգացում և ավարտ:

3. Հետաքրքրություն է ցուցաբերում ընթերցանության նկատմամբ:

4. Կանխագուշակումներ է անում, թե ինչ կլինի հետո:

5. Կապեր ու նմանություններ է գտնում տարբեր պատմությունների միջև:

6. Պատկերների օգնությամբ պատկերացում է կազմում, թե ինչի մասին է գիրքը:

7. Կարողանում է պատմվածքի կամ հեքիաթի հերոսներին դասակարգել ըստ կարևորության:

8. Ձևացնում է, թե կարդում է իր և ուրիշների համար

6.4 ՎԱՂ ԳՐԱՃԱՆԱՉՈՒԹՅՈՒՆ

Երբ երեխաները հասկանում են, որ գիրը որոշակի իմաստ է պարունակում, նրանք արդեն շահագրգռվածություն են ցուցաբերում ինքնուրույն գրելու, ստեղծելու բառեր նույնիսկ այն դեպքում, երբ դեռևս չունեն հեգելու և գրելու հմտություններ: Նրանք սկսում են նկարել ինչ-որ բաներ՝ որոշակի գաղափարներ արտահայտելու համար ավելացնելով պատահական տառեր կամ բառեր: Ժամանակի ընթացքում, ավելի փորձառություն ձեռք բերելով, երեխաները սկսում են բառեր կազմել՝ օգտագործելով իրենց անվան տառերը, հնարովի նշաններ, արտանկարելով տարբեր

բառեր՝ ուրիշներից օգնություն խնդրելով:

<u>Չափորոշչային պահանջներ</u>

1. Երեխան ճանաչում է տպագիր խոսքը:

2. Հետևում է տպագիր խոսքին ձախից աջ, վերևից ներքև:

3. Ճանաչում է տպատառերով գրված իր անունը:

4. Տպագիր տառերով փորձում է «գրել» իր անունը:

5. Միջավայրում որոշ ծանոթ տառեր և բառեր է գտնում:

6.5 ԽՈՍՔԻ ՀՆՉՅՈՒՆԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒՄ

5-6 տարեկան երեխաներին դաստիարակն օգնում է ուշադրություն դարձնել խոսքին, դրա առանձին մասերին, այսինքն՝ անցնել նախադասությունից մինչև հնչյուն: Նախքան հնչյունի գրությանը հասնելը՝ երեխան պետք է բառի մեջ հստակ տարբերի հնչյունները: Պարբերություն-նախադասություն-բառ-վանկ-հնչյուն ուղին երեխան անցնում է մանրամասնությամբ, իր խոսքից առանձնացնում է նախադասությունները, բառերը, վանկերը, հնչյունները: Այս ամենից հետո հնչյունի գրությունը՝ տառը, դառնում է միայն տեխնիկայի հարց: Այս ընթացքում բառերի հեգումը կհեշտացնի գրաճանաչությունը:

<u>Չափորոշչային պահանջներ</u>

1. Երեխան բառը բաժանում է վանկերի:

2. Երեխան վանկերի միջոցով կազմում է բառեր (**2-3** վանկ):

3. Թվարկում է բառեր, որոնք սկսվում են միևնույն հնչյունով:

4. Որոշում է արտասանած բառերի առաջին հնչյունը:

5. Կրկնում է առաջարկված բառերն ու բառակապակցությունները՝ ճիշտ արտաբերելով հնչյունները:

6. Հասկանում է հականիշներ:

7. Հասկանում է որոշ հոմանիշներ:

ԿԵՐՊԱՐՎԵՍՏԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական հաստատությունումդաստիարակչական գործընթացի ամբողջական համակարգում առաջատար տեղ է զբաղեցնում գեղագիտական դաստիարակությունը:

Գեղագիտական դաստիարակությունը հատուկ կազմակերպված մանկավարժական գործընթաց է՝ ուղղված երեխայի գեղագիտական զգացումների,կյանքում և արվեստում գեղեցիկի վերաբերյալ պատկերացումների ձևավորմանը, շրջապատող իրականության հանդեպ գեղագիտական վերաբերմունքի գեղագիտական գնահատականի ձևավորմանը:

Ստեղծագործող անձնավորությանը բնորոշ է կյանքի ակտիվ դիրքորոշում, գեղեցիկն ընկալելու, զգալու և գնահատելու ընդունակություն: Գեղագիտական դաստիարակության հիմքումընկած է հուզազգացմունքայինոլորտի զարգացումը:

Գեղագիտականդաստիարակությունը նպաստումէ ավագ նախադպրոցականի հուզական ոլորտի զարգացմանը և զգայական փորձի հարստացմանը, ակտիվացնումնրա իմացական գործունեությունը և դրդում ստեղծագործության, բացահայտում երեխայի ընդունակությունները և ձևավորում անձնային կարևոր հատկություններ:

Նախադպրոցական տարիքում երեխայի գեղագիտական դաստիարակությունն ուղղված է գեղագիտական գիտակցության և ճաշակի ձևավորմանը:

Գեղագիտական դաստիարակության խնդիրների առաջին խմբին են պատկանում՝

- գեղեցիկի, արվեստի մասին տարրական գիտելիքների փոխանցումը.
- գեղեցիկին կամ տգեղին հուզականորեն համարժեք արձագանքելու ունակության ձևավորումը.
- գեղեցիկը նկատելու և գնահատելու կարողությունների ձևավորումը.

- գեղեցիկը ճանաչելու պահանջմունքի զարգացումը.
- գեղագիտական ճաշակի դաստիարակությունը:

Նշված խնդիրներն ուղղված են երեխաների գեղագիտական գիտակցության ձևավորմանը:

Բոլոր խմբերի խնդիրները նպաստում են գեղագիտա-գեղարվեստական ընդունակությունների զարգացմանն ու կարողությունների ձևավորմանը:Գեղագիտական ուսուցման եղանակով իրականացվում են գեղագիտական դաստիարակության հետևյալ խնդիրները.

- նկարչական ունակությունների և կարողությունների ձևավորումը.
- ծեփակերտման ունակությունների և կարողությունների ձևավորումը.
- ապլիկացիայի ուսուցումը.
- կառուցողական (ճարտարապետա-շինարարական) ունակությունների և կարողությունների ձևավորումը.
- Երաժշտա-ռիթմիկ կարողությունների ձևավորումը,
- պարարվեստի տարրերի ձևավորումը,
- դեկորատիվ արվեստի տարրերի ձևավորումը,
- արտաքին և ներքին միջավայրի ձևավորման (դիզայնի) մասին ընդհանուր գաղափարների փոխանցումը,
- գեղարվեստա-խոսքային ընդունակությունների զարգացումը և արտահայտիչ խոսքի ձևավորումը:

Գեղագիտական դաստիարակության բովանդակությունընախադպրոցական տարիքում հիմնականում կառուցվում է երկրորդ խմբի խնդիրների հիման վրա, մշակվում են ծրագրեր և տեխնոլոգիաներ՝ ուղղված նախադպրոցականի գեղագիտական տարբեր կարողությունների ձևավորմանը:

Գեղագիտական դաստիարակության հիմնական միջոցը երեխայի մշտական հաղորդակցումն է արտաքին միջավայրի և կենցաղի գեղագիտական կողմերի հետ: Ամենօրյա շփումը գեղեցիկի հետ նպաստում է երեխայի կողմից գեղեցիկի ընկալմանը, գեղեցիկի կառուցմանը, ստեղծմանը և ի վերջո՝ գեղեցիկ միջավայրում ապրելու ցանկությանը, պահանջմունքի զարգացմանը: Բարեկիրթ միջավայրը երեխայի գեղագիտականդաստիարակության հիմնական պայմանն է և միջոցը:

Գեղագիտական դաստիարակության կարևորագույն պայմաններից է բնության հետ երեխայի շարունակական շփման ապահովումը: Գեղագիտական դաստիարակությանը նպաստող ամենալավ միջավայրը հայրենի բնությունն է: Հայրենի բնությունն իր ազգամշակութային բազմադարյա շերտերով, քարակերտ և ձեռակերտ կոթողներով, ազգիպատմությամբ, լեզվով և կենցաղով՝ ընդհանրական ձևով հենք է հանդիսանում գեղագիտական դաստիարակության համար:

Հզորէ արվեստի ներգործությունը գեղագիտական դաստիարակության ընթացքում:Արվեստի ժանրերից հարկ է առանձնահատուկ անդրադառնալգեղարվեստական գրականությանը, որի դերն ու նշանակությունննանփոխարինելի է նախադպրոցականի գեղագիտական գիտակցության զարգացման գործում:

Հատկապես հզոր է ժողովրդական բանահյուսության (հեքիաթների,շուտասելուկների, սուտասելուկների, հանելուկների,ասացվածքների, խաղիկների և ծեսերի) ներգործությունը:

Հեքիաթների երևակայական կերպարները ներառում են բարու և չարի հավաքական նմուշներ, բարոյականության և գեղեցկության տարրեր, որոնք ընդհանրացված ձևով նպաստում են երեխայի կողմից երկրային կյանքի իմաստավորմանը, իրական կյանքում բարու և չարի տարանջատմանը:

Նախադպրոցականի գեղագիտական զարգացմանը լավագույնս նպաստում է ինքնուրույնգեղարվեստական գործունեությունը:Գեղարվեստական գործունեությամբ ինքնուրույն զբաղվելու կարողությունը զարգանում է աստիճանաբար, անցնելով ձևավորման երեք փուլ.

- վերարտադրող (ռեպրոդուկտիվ) գործունեության ձևավորում,
- ստեղծագործական բնույթի, մեծահասակների հետ համատեղ գործունեության ձևավորում,
- ինքնուրույն գեղարվեստական գործունեության ձևավորում, որն աստիճանաբար վերածվում է ստեղծագործության:

Գեղագիտական դաստիարակության միջոցները արդյունավետ են ինչպես ինքնուրույն կիրառման, այնպես էլ համատեղ օգտագործման պայմաններում:

Գեղագիտական դաստիարակության կազմակերպման ձևերը բազմաթիվ են և

բազմաբնույթ: Մանկապարտեզում իրականացվող մանկավարժական գործընթացումծրագրավորված կազմակերպվում են բազմատեսակ պարապմունքներ, խաղ- պարապմունքներ, պարապմունք-վիկտորինաներ, էքսկուրսիաներ, տոնահանդեսներ և այլն:

Պարապմունքների համակարգում իրենց ուրույն տեղն են զբաղեցնում կերպարվեստային պարապմունքները:

Կերպարվեստինպատակն է երեխաների տարիքայինառանձնահատկություններին համապատասխանող կերպարվեստային գեղարվեստական մեծ արժեք ներկայացնող նյութերի հիման վրա զարգացնել երեխաների կերպարվեստային գործունեությունը:

Կերպարվեստային ընդունակությունների և պատկերացումների ձևավորումը ծեփակերտման, նկարչական աշխատանքների միջոցով առավել արդյունավետ զարգացում կստանան նախատեսված շրջապատող կյանքի կոնկրետ յուրահատկությունները՝ բնական լանդշաֆտը, նրա գունային գամման, ազգային նախշերը, կենցաղի առանձնահատկությունները հաշվի առնող թեմատիկայի միջոցով:

Կերպարվեստը նախատեսվում է երեխաների գեղագիտական դաստիարակությունը իրականացնելիս օգտագործել ժողովրդական ստեղծագործությունների լավագույն նմուշները:

Երեխաների կերպարվեստային գործունեության ծրագրի հիմնական խնդիրներն են՝

1. զարգացնելերեխաների գեղարվեստա–ստեղծագործականունակությունները.
2. երեխաների մեջ ամրապնդել և կատարելագործել կերպարվեստային գործունեության այբուբենը՝ գծանկարի, գունանկարի, ծեփակերտման, ապլիկացիայի, դեկորատիվ կիրառական աշխատանքի հիմունքներ.
3. նկարչության ուսուցում բնօրինակից հիշողությամբ և երևակայությամբ, և դրա հիման վրա երեխաների տեսողական հիշողության տարրական պատկերացումների, ստեղծագործական երևակայության զարգացումը.
4. երեխաների գեղագիտական ընկալման, գեղագիտական ճաշակի, իրականության երևույթների և առարկաների նկատմամբ հուզական-զգայական

վերաբերմունքի զարգացումը և կատարելագործումը.

5. երեխաների մեջ կերպարվեստի նկատմամբ սիրո և հետաքրքրության ձևավորումը,

6. նպաստել երեխաների անհատականության զարգացմանը.

7. սովորեցնել երեխաներին՝ վերլուծել դաստիարակի կողմից կառուցած շինությունների նմուշները, առանձնացնել հիմնական մասերը (շենքերի, կամուրջների և այլն), սահմանել այդ մասերի տարածական տեղադրությունը մեկը մյուսի հարաբերությամբ, շինության յուրաքանչյուր մասից առանձնացնել առանձին մասնիկներ (դետալներ):

Կարողանալ պլանավորել շինության ստեղծման հիմնական փուլերը: Կարողանալ շինության կառուցման ընթացքում ձևափոխել դետալների օգտագործումը, մեկ դետալը փոխարինել մյուսով՝ չխախտելով հիմնական կառուցվածքը (կոնստրուկցիան):

Կառուցել տարբեր շենքեր, կամուրջներ, բղուակ, մեքենաներ և այլն: Կառուցել ոչ միայն նմուշի հիման վրա, այլև դաստիարակի բառային նկարագրությամբ: Նկարներին, լուսանկարներին նայելով՝ կառուցել շինություններ (դպրոցի շենք, մետրո, ցուցահանդեսի տաղավար և այլն):

Կատարել ավելի բարդ կառուցվածք ունեցող շինություններ (փողոց, կենդաբանական այգի, կայարան և այլն):

Թղթի աշխատանք - ամրապնդել թուղթը ծալելով կիսելու երեխաների կարողությունը,պատրաստել պարզ խաղալիքներ:

Կերպարվեստային գործունեության խնդիրներն են նաև՝

- զարգացնել երեխաների մեջ ստեղծագործական ձեռներեցությունը, հնարամտությունը.
- սովորեցնել ինքնաշեն խաղալիքներ պատրաստելու համար ընտրել բազմազան նյութեր, կառուցել մտացածին համապատասխան:

Ինքնաշեն խաղալիքների պատրաստման համար օգտագործել կաղին, խոտ, ծղոտ, սերմեր, թխկի և եղևնու կոներ և այլն:

Նկարչություն

Թեմա՝ «Ծաղկած ճյուղ»

Տեսակը՝ բնօրինակից նկարչություն

Նպատակը

- Սովորեցնել մատներով և գուաշով աշխատելու տեխնիկան՝ մատնահպումներին:
- Ամրապնդելկերպարվեստային պարագաներից ճիշտ օգտվելու կանոնները:
- Ձևավորել հետաքրքրություն նկարչական նոր նյութերի նկատմամբ:
- Զարգացնել կենցաղային հմտություններ՝ աշխատանքից հետո ցուցամատը մաքրել լաթով, ապա խոնավ անձեռոցիկով:

Անհրաժեշտ նյութեր

- Ալբոմի թուղթ՝ ըստ երեխաների քանակի (նախապես նկարել ճյուղ)
- Ցուցաղրման համար մեծ թուղթ (նախապես նկարված ճյուղով)
- Գուաշ (վարդագույն, կարմիր, դեղին)
- Ջրաման՝ լցված ջրով
- Լաթեր
- Խոնավ անձեռոցիկներ
- Ծաղկած ճյուղ գարնանային ճյուղեր պատկերող նկարներ

Խթանման փուլ

Երեխաները գարնանային երաժշտության ներքո մտնում են ներս. Ողջունում են հյուրերին և տեղավորվում սեղանների շուրջ: Դաստիարակը պարապմունքը սկսում է ոտանավորով:

Զնծաղիկները բացվում են դաշտում,

Առվակ ու գետակ քչքչում սարում, 5ր

Թիթեռնիկները թռչում են օդում,

Գարուն է եկել, արևն է շողում:

Ինչի՞ մասին է ոտանավորը:

-Ե՞րբ են բացվում ծաղիկները, կանաչում դաշտերը:

Դաստիարակը խոսում է տարվա եղանակների մասին.

Տարին ունի չորս եղանակ՝ գարուն, ամառ, աշուն, ձմեռ: Հիմա տարվա գարուն եղանակն է: Գարնան ամիսներն են մարտ, ապրիլ, մայիս: Այսօր մարտ ամսվա վերջին օրն է՝ մարտի երեսունմեկն է: Այսօր մեզ մոտ նկարչության պարապմունք է: Այսօր մենք միասին կնկարենք ծառի ծաղկած ճյուղ:

<u>Հիմնական մաս</u>

<u>Իմաստի ընկալման փուլ</u>

Շրջել հիմնական պատին կախված նկարները, բացատրել, որ գարնանը ծառերը սկսում են բողբոջել, ծաղկել ապա տերևակալել: Ծառի մասերն են արմատները, որոնցով ծառը սնվում է հողից, բունը և ճյուղերը: Ճյուղերի վրա դուրս են գալիս բողբոջները, որոնք բացվում են դառնում ծաղիկներ: Ծաղիկները լինում են դեղին, սպիտակ, վարդագույն և կարմիր: Դաստիարակը բացատրում է գուաշով նկարելու տեխնիկան: Ցուցամատիտը խոնավեցնում ենք ջրամանի մեջ, հպում ենք ներկամանի մեջ լցված գուաշին, հետո մատը սեղմում ենք թղթին նկարված ճյուղի ծայրերին: Դաստիարակը և՛ բացատրում է,և՛ նկարում:

Միացնում ենք գարնանային երաժշտություն, երեխաներին օգնում ենք նկարել: Ավարտելուց հետո կախել նկարները հիմնական պատին:

<u>Ֆիզկուլտ-դադար</u>

Ծափ-ծափ-ծափ, 10ր

Ունեմ երկու ափ,

Ափ- ափ-ափ,

Ունեմ տասը մատ:

Մատիկները կորանում

Ամուր բռունցք են դառնում

Աջից, ձախից հարվածում

Մարզվում են ամրանում:

<u>Կշռադատման փուլ</u>

Ամփոփում

Դաստիարակը հարցերի միջոցով երեխաների հետ քննարկում է նկարները:

- Ի՞նչ նկարեցինք միասին:
- Ինչո՞վ նկարեցինք:
- Ի՞նչ գույներ օգտագործեցինք: 5ր
- Ծառերը ե՞րբ են ծաղկում:
- Տարին քանի եղանակ ունի:
- Հիմա տարվա ո՞ր եղանակն է:
- Ձեզ դու՞ր եկավ պարապմունքը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Չափորոշիչը համաձայն նախագծի հնարավորություն է ընձեռնում ստանալ ուսումնական նյութի և դրա ուսումնասիրության համար նախատեսված պարապմունքների այնպիսի հարաբերություն, որը հնարավորություն է տալիս երեխաներին հասկանալ այն, սովորել և կարողանալ կիրառել:

Կարողությունները երեխաների կողմից ուսումնառության և դաստիարակության ընթացքում ձեռք բերված գիտելիքների, արժեքների, հմտությունների դիրքորոշումների հիման վրա արդյունավետ արձագանքելու ձևերն են: Կարողությունները հնարավորություն են տալիս ու ձևավորում երեխաների կողմից գիտելիքի ձեռք բերմանը ու զարգացմանը:

Ամբողջ աշխատանքային գործունեության ընթացքում կարևոր է ցուցաբերել այնպիսի մոտեցում երեխաների գիտելիքների ձեռք բերման ընթացքում, քանի որ յուրաքանչյուր երեխա ունենում է ընկալման ու արտահայտման տարբեր մակարդակ ու ընդունակություններ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոնիչները և կերպարվեստի մեթոդիկային ներկայացվող պահանջները հաստատելու մասին ՀՀԿԳ նախարարի 30 մարտի 2011 թվականի N257-նհրաման:

2. Ծննդից մինչև վեց տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչներ 2011թ:

3. Մանկապարտեզի 0-6 տարեկանների կրթական համալիր ծրագրեր, հեղինակ՝ Լ. Մաունկայն, Հ. Միրզոյան, Ռ. Ծառուկյան, Երևան 2007թ.